ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԸ 1916—1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր ԿԻՐԻՄԵՆՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայերը գործուն մասնակցություն են ունեցել ինչպես Առաջին համաշխարհային, այնպես էլ նրա ավարտից հետո մինչև 1920 թ. վերջերը պատերազմական տարբեր թատերարանեներում տեղի ունեցած մարտական գործողություններին։ Միայն 1914—1915 թթ. Թուրքիայում բնակվող շուրջ 3 միլիոն հայերից բանակ զորակոչվեցին ավելի քան 300 հազար հայ երիտասարդներ, որոնք նախ օգտագործվեցին աշխատանքային գումարտակներում, ապա համարյա ամբողջովին ոչնչացվեցին թուրքերի կողմից[1]։

Ռուսական կայսրության մեջ գտնվող 2 միլիոն 54 հազար հայեր ցարական բանակին տվեցին շուրջ 250 հազար զինվոր, որը կազմում էր արևելահայերի 13 տոկոսը[2]։ Ըստ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Հարությունյանի, ռուսական բանակի Արևմտյան և Կովկասյան ռազմաճակատներում մարտնչել են շուրջ 300 հազար հայ ռազմիկներ[3]։ Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներ զորակոչված հայ ռազմիկների թիվը անցնում էր 50 հազարից[4]։

Բացի վերոհիշյալից 1914—1916 թթ. Հայկական Ազգային բյուրոյի (Թիֆլիս) նախաձեռնությամբ և ռուսական կառավարության թույլտվությամբ կազմակերպվեցին հայկական 7 կամավորական ջոկատներ, որոնց շարքերում ընդգրկված էին շուրջ 9000 հայ մարտիկներ[5], որոնք զգալի օժանդակություն ցույց տվեցին ռուսական զորքերին Արևմտյան Հայաստանի ազատագրման և թուրքական կոտորածներից հայ բնակչության մի մասի փրկության գործում։ 1916 թ. ամռանը ցարական կառավարությունը ցրեց այդ ջոկատները և նրանց հիման վրա կազմավորեց 5 գումարտակ, որոնք մտցվեցին ռուսական կանոնավոր բանակի կազմի մեջ։ 1917 թ. նոյեմբերին կազմավորվեց Կովկասյան ռազմաճակատի Հայկական կորպուսը, որն իր շարքերում ուներ շուրջ 20.000 մարդ[6]. կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Թ. Հ. Նազարբեկովը։

Հիշյալ ժամանակամիջոցում գոյություն է ունեցել հայկական մեկ այլ զորամաս ևս, որը գործել է Մերձավոր Արևելքում՝ Պաղեստին—Լիբանան—Կիլիկիա ճակատում՝ ֆրանսիական բանակի կազմում ընդդեմ թուրքերի։ Դա Հայկական լեգեոնն էր, որն սկզբնական շրջանում կոչվում էր Արևելյան լեգեոն։ Նրա պատմությունը ինչպես խորհրդահայ, այնպես էլ արտի հայ պատմագրության կողմից դեռևս հատուկ գիտական ուսումնասիրության թե-

---

1 М. Г. Персиян. Геноцид армян в Османской империи. 1982, с. 7. Հ. Ռ. Սիմոնյան. Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից. Երևան, 1991, էջ 261—262։

2 Հայ ժողովրդի պատմություն (ութ հատորով). հ. 6, Երևան, 1981, էջ 547։

3 А. О. Арутюнян. Кавказский фронт 1914—1917. Ереван, 1971, с. 296.

4 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 547, նաև՝ Կ. Ա. Հարությունյան. Հայ ողովրդի ավանդը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում.—«Հայկական բանակ», № 2—3, 1995, էջ 3—14։

5 А. О. Арутюнян. Указ. соч., с. 297.

6 Հայաստանի Հանրապետության պատմության պետական կենտրոնական արխիվ (ՀՊՊԿԱ), ֆ. 121, ց. 1 գ. 30, թ. 7։

մա չի դարձել, սակայն քիչ թե շատ ուսումնասիրվել է սփյուռքահայ հեղինակների կողմից, որոնք հիմնականում հուշագրություններ են, ականատեսների պատմություններ և կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում Հայկական լեգեոնի պատմությունն ուսումնասիրողների համար։ Այս առումով, հիշատակության են արժանի Տիգրան Պոյաճյանի, Ա. Գարամանուկյանի, Սարգիս Պողոսյանի հուշագրությունները, որտեղ փաստացի, հավաստի տեղեկություններ կան Հայկական լեգեոնի կազմավորման և գործունեության վերաբերյալ[7]։ Լեգեոնի մասին արժանահիշատակ տեղեկություններ են պարունակում Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակը, Հայկական սովետական հանրագիտարանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Գ. Սահակյանի և մի շարք այլ հեղինակների աշխատությունները[8]։

Պաղեստինյան ճակատում և Կիլիկիայի տարածքում գործած Հայկական լեգեոնի կազմավորման և գործունեության համառոտ պատմությունը հետևյալն է։

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում, Թուրքիայի կառավարությունը, օգտվելով «հարմար» պահից, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ շրջաններում պլանավորված կերպով իրականացրեց հայերի ցեղասպանություն, որին զոհ դնացին ավելի քան 1,5 միլիոն հայեր։ Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ 200 հազար հայ կանայք ու երեխաներ։ Բնաջնջելով ու տիրապետելով արևմտահայությանը, երիտթուրքական ղեկավարները դաղանային եղանակով «լուծեցին» Հայկական հարցը։ Թուրքիայի ներքին գործերի նախարար, երիտթուրքերի եռյակի առաջնորդներից Թալեաթ փաշան 1915 թ. արևմտահայերի Մեծ եղեռնն իրականացնելուց հետո պաշտոնապես ցինիկորեն հայտարարեց. «Չկա այլևս Հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»[9]։

Արևմտահայերի ահավոր չարչարանքների լուրը առաջորեն տարածվեց աշխարհով մեկ և ամենուրեք առաջ բերեց առաջադեմ մարդկության զայրույթն ու բողոքը։ Համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ 1915 թ. մայիսի 11-ին Անտանտայի երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունները հատուկ հայտարարությամբ դիմեցին Թուրքիայի կառավարությանը, որտեղ ոչ միայն դատապարտեցին անմեղ մարդկանց կոտորածները, այլև մարդկության դեմ կատարված այդ հանցագործությունների պատասխանատվություն դրեցին Թուրքիայի կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչների վրա և գգուշացրին, որ պատերազմի ավարտից հետո նրանք կկանգնեն միջազգային դատարանի առջև։ Անտանտայի երկրների կառավարությունները ամեն կերպ ձգտում էին հայերի ցեղասպանության նկատմամբ միջազգային հասարակայնության արտահայտած զայրույթն ու բողոքներն օգտագործել Թուրքիայի և Գերմանիայի դեմ իրեն քարոզչության մեջ, որպեսզի իրենց հայտարարեն նահատակ ազգերի պաշտպան ու ազատարար և, դրանից օգտվելով, իրագործեն Թուրքիան ու Գերմանիան ջախջախելու, ապա նրանց գաղութներն ու տարածքներն իրար մեջ բաժանելու համար։ Իրենց այդ նպատակները իրագործելու համար մեծ տերությունները գաղտնի համաձայնու-

---

7 Տ. Պոյաճյան. Հայկական լեգեոնը. Ուոթրթաուն, 1965։ Ա. Գարամանուկյան. Հայկական լեգեոնը պատմական ու քաղաքական հարցերու լույսի տակ և վավերագրեր. Պեյրութ, 1974։ Ս. Պողոսյան. Թրքահայ սպայի մը օրագիր. Հ. Բ. Փարիզ, 1947։

8 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 561—565։ Հայկական սովետական հանրագիտարան. հ. 1, 1974, էջ 691, հ. 2, 1976, էջ 33։ Ռ. Գ. Սահակյան. Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ., Երևան, 1970։ Ա. Կենջյան. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը և Կիլիկյան ինքնավարության ակտը. Պեյրութ, 1958։ Կ. Իզմիրլյան. Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս. Պեյրութ, 1964 և այլն։

9 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 557։

թյան էին դալիս միմյանց հետ։ Հենց այդպիսի քաղաքականության զոհ դարձան կիլիկիահայերը։ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը 1916 թ. գաղտնի համաձայնագիր էին կնքել, որի համաձայն պատերազմի հաղթական ավարտից հետո Կիլիկիան մտնելու էր Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ և ոչ մի խոսք չկար հայերի ինքնավարության մասին։ Սակայն իրենց նվաճողական քաղաքականությունը բոցարկելու նպատակով ֆրանսիական գաղութարարները սիրաշահում էին կիլիկիահայերին՝ ինքնավարություն շնորհելու կեղծ խոստումներով, որպեսզի նրանց ներգրավեն Մերձավոր Արևելքում գործող իրենց բանակի մեջ, քանի որ այն շատ թույլ էր և Ֆրանսիայից որևէ համալրում չէր սպասում[10]։ Հենց դրանով էր պայմանավորված այն, որ երբ 1916 թ. հոկտեմբերին Լոնդոնում Հայկական հարցի կապակցությամբ տեղի ունեցած բանակցությունների ժամանակ Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը առաջարկեց ջարդերից փրկված հայ տարագիրներից կազմակերպել առանձին զորամաս, ապա Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունների լիազոր ներկայացուցիչներ Ժորժ Պիկոն ու Մայքլ Սայքսը անմիջապես համաձայնություն տվեցին դրան։ Բանակցությունները ավարտվեցին հոկտեմբերի 27-ին կնքված համաձայնագրով, որով երկու պետություններ երաշխավորում էին հայերի ինքնավարության իրավունքը Կիլիկիայում՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո։ Այդ համաձայնությամբ ստեղծվելու էր հայերից բաղկացած կամավորական մի զորամաս, որը ֆրանսիական զորքերի կազմում մասնակցելու էր Թուրքիայի դեմ պատերազմական գործողություններին՝ պաղեստինյան ռազմաճակատում, իսկ հետագայում պետք է դառնար հայկական բանակի կորիզը Կիլիկիայում[11]։

1916 թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարությունը համապատասխան հրաման ընդունեց այդ զորամասը կազմավորելու մասին. այն ստացավ Արևելյան լեգեոն անունը։ Նոյեմբերի 26-ին ֆրանսիական կառավարության որոշմամբ հաստատվեց այդ հրամանը։ Որոշման առաջին հոդվածում նշված էր, որ Կիպրոսում պետք է կազմավորվի արևմտահայերից ձևավորված Արևելյան լեգիոն, որի անձնակազմը իբրև օժանդակ ուժ ծառայելու էր ֆրանսիական որոշի տակ և պատերազմի ժամանակ մարտնչելու էր «Ասիական Թուրքիա մեջ»[12]։ Լեգեոնի ծախսերը հոգալու էր Ֆրանսիայի կառավարությունը, զորամասը ղեկավարելու էին ֆրանսիացի սպաները։ Կազմավորման աշխատանքներն իրագործվելու էին Կիպրոսում, որից հետո լեգեոնը պաղեստինյան ճակատում մասնակցելու էր Թուրքիայի դեմ մղվող մարտական գործողություններին[13]։

Պողոս Նուբարը ֆրանսիական կառավարության այդ որոշման առթիվ հեռագրեց բոլոր հայ գաղթավայրերի ու Կովկասի հայությանը, որի մեջ ասված էր. «Դաշնակիցներու հաղթանակեն վերջ, մեր ազգային բաղձանքները պիտի գոհացվին, կը հանձնարարեմ ձեզ ձեռք առնել տալ բոլոր միջոցները բաջալերելու և դյուրացնելու համար կարելի ամենամեծ թվով կամավորներու զինվորագրությունը»[14]։

Արևելյան լեգեոնի հրամանատար նշանակվեց ֆրանսիական բանակի տնդապետ Ռոմիեոն, որը 1916 թ. նոյեմբերի վերջերին ժամանեց Կահիրե և Եգիպտոսի հայկական ազգային միության հետ համատեղ ձեռնամուխ եղավ լեգեոնի կազմավորման աշխատանքներին։ Ազգային միության կոչով առաջին լեգեոնի մեջ համավորագրվեցին Մուսա լեռան լեգենդար պաշտպանները, որոնք ժամանակավորապես հանգրվան էին ստել Եգիպտոսի Պորտ-Սաիդ նավահանգստային քաղաքում։ Նրանցից 600 հոգի, ովքեր ակտիվորեն

---

10 Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 113։

11 Նույն տեղում, էջ 115։

12 Ա. Գարամանուկյան. նշվ. աշխ., էջ 42։

13 Տ. Պոյաճյան. նշվ. աշխ., էջ 8—10։

14 Ա. Գարամանուկյան. նշվ. աշխ., էջ 53։

մասնակցել էին թուրքական բանակի դեմ 40 օր տևած հերոսական մարտերին, առաջինների թվում կամավորագրվեցին Արևելյան լեգեոնում։ Նրանց օրինակին հետևեցին 300 եգիպտահայեր և թուրքական բանակի 236 հայ ռազմագերիներ։ «Միջագետքի և Սիրիայի ճակատներեն անգլիացիներու կողմանե թուրքական բանակեն առնված հայ ռազմագերիները ևս կամավոր արձանագրվեցան»,—իր հուշերում վկայում է թուրքական բանակի հայ սպա Սարգիս Պողոսյանը[15]։

Մուսալեռցիներից, եգիպտահայերից և թուրքական բանակի հայ ռազմագերիներից էլ կազմավորվեց լեգեոնի առաջին գումարտակը։ Նոյեմբերի վերջերին և դեկտեմբերի սկզբներին այն փոխադրվեց Կիպրոս կղզի և հաստատվեց Ֆամագուստա նավահանգստից 15 կմ հյուսիս-արևելք ընկած Մոնարկա կոչվող ծովափնյա մի ամայի դաշտում։ Շուտով Կիպրոս ժամանեցին Եգիպտոսից, Ֆրանսիայից, Ամերիկայից և այլ վայրերից հավաքագրված կամավորները և 6—7 ամսվա ընթացքում Արևելյան լեգեոնի անձնակազմը հասավ շուրջ 3000 հոգու։ Լեգեոնի մեջ կային նաև բեսապցիներ, սեբաստահայեր, արաբկիրցիներ, ընքուշ-ատիշցիներ և հայաշատ այլ վայրերից թուրքական ջարդերից հրաշքով փրկված հայորդիներ։

Լեգեոնի հոգևոր առաջնորդ նշանակվեց վարդապետ Վաղարշակ Արշակունին։ Կրտսեր հրամանատարական կազմը (տեղակալներ՝ սերժանտներ) հիմնականում համալրված էր հայերից։ Նրանց թվում էին՝ Վահան Փորթուգալյանը, Հակոբ Արևյանը, Ջիմ Ջանգլյանը, Հայկ Ազատյանը, Ճան Շիշմանյանը, Ռուբեն Հերյանը և ուրիշներ։ Կարճ ժամանակամիջոցում լեգեոնականները բանակատեղում կանգնեցրին վրանատնակներ, ապա կառուցեցին զորանոցային շենքեր՝ անհրաժեշտ օժանդակ շինություններով, որից հետո ձեռնամուխ եղան կանոնավոր դինավարժությունների։ Փորձված հրամանատարների ղեկավարությամբ նրանք մասնակցում էին ֆիզիկական, մարտավարական, կրակային, շարային ամենօրյա պարապմունքներին, մարզվում հրացանաձգության, նշանառության, մենամարտի, վաղքարշավի, մարմնամարզության և այլ բնագավառներում, անցկացնում դինավարժություններ, զորահանդես, զանազան մրցություններ։

Արևելյան լեգեոնը սկզբնական շրջանում բաղկացած էր 4 գումարտակից, որոնցից մեկը գնդացրային և 37 մմ հրետանային մարտկոցից։ Առաջին գումարտակը ամբողջովին կազմված էր մուսալեռցիներից, երկրորդը՝ թուրքական բանակի հայ գերիներից, երրորդը՝ ամերիկահայերից, մնացած ստորաբաժանումները՝ տարբեր վայրերից ժամանած հայ կամավորներից. ավելի ուշ ձևավորվեցին նաև լեգեոնի հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ գումարտակները։

Կիպրոսում լեգեոնը մնաց ավելի քան 16 ամիս և 1918 թ. մայիսին փոխադրվեց Եգիպտոս՝ Պորտ-Սաիդ, ապա՝ Քանթարա և Իսմայիլյա։ Կիպրոսում մնաց միայն հայկական մեկ ուսումնական վաշտ, որը զբաղվում էր այլ երկրներից ժամանող հայ կամավորների ընդունման և վարժեցման գործով, ինչպես նաև կատարում էր հրամանատարության հատուկ առաջադրանքներ։ Այսպես, օրինակ, պաղեստինյան ճակատում մարտական գլխավոր գործողություններ սկսվելուց առաջ և նրա առաջին օրերին, հայկական վաշտի զինվորները ֆրանսիական հրամանատարության առաջադրանքով, բողարկվելով գիշերվա մթության մեջ, աննկատ դեսանտ իջեցրեցին թուրքական բանակի թիկունքում՝ Կիլիկիայի Տաշ-Ուճա ծովածոցի մոտ գտնվող Դանա Ադասրն լքված կղզյակում։ Այնուհետև, գիշերները հայ կամավորները նավակներով աննկատ իջնում էին թուրքերի ձեռքում գտնվող ափամերձ շրջանները և կատարում հանդուգն մարտական առաջադրանքներ. կտրատում էին հեռագրի և հեռախոսի լարերը, ականապատում ճանապարհները, պայ-

15 Ս. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 133—133։

թեցնում թշնամու գինամթերքի պահեստներն ու զորանոցները և այլն։ Սատանաների կերպարանքով քողարկված գիշերային այդ «անկոչ հյուրերը՝ կռուշավոր, պոչավոր սև շեյթանները» ավելի քան 1,5 ամիս ահ ու սարսափի մեջ էին պահում շրջակա թուրքական կայազորների զինվորներին, նրանց պատճառում մարդկային և նյութական զգալի կորուստներ։ Այդ ընթացքում հայերը ոչ մի կորուստ չունեցան, իսկ թուրքերը տվեցին տասնյակ զոհեր, մեծ վնաս հասցվեց նրանց հաղորդակցության ու կապի ուղիներին, զենքի ու գինամթերքի պահեստներին։ Առաջադրանքը հաջողությամբ կատարելուց հետո հայ լեգեոնական դեսանտայինները, ֆրանսիական մի ռազմանավի օգնությամբ, հեռացան կղզուց և վերադարձան Կիպրոսի բանակատեղին[16]։

Կատարելով ֆրանսիական հրամանատարության առաջադրանքը, Արևելյան լեգեոնի հիմնական ստորաբաժանումները 1918 թ. հուլիսի 12-ին հրաման ստացան շարժվել դեպի արևելք։ Հուլիսի վերջին նրանք հասան Հորդանանի Մեհտել բաղաքը, որտեղ մտան անգլո-ֆրանսիական դաշնակից զորքերի Պաղեստինյան զորամասի մեջ, որի գլխավոր հրամանատարը գեներալ Էդմոնդ Հենրի Ալենպին էր։ Մեհտելի մեջ Արևելյան լեգեոնին միացան 150 սիրիացի արաբ կամավորներ՝ կազմելով առանձին վաշտ[17]։ Օգոստոսի 26-ին լեգեոնը հասավ Պաղեստինի Ուատի Պալուվի Ռաֆաթ կոչվող շրջանը։ Հենց այդ ժամանակ էլ զորամասը համալրվեց անգլիական «Սթոք» տիպի ավյալ ժամանակի համար կատարելագործված հրանոթներով, որոնք փոխարինեցին նախկին 37 մմ հին համակարգի հրանոթները։ Չնայած նոր զենքին վարժվելու համար համեմատաբար քիչ ժամանակ էր մնացել, այնուամենայնիվ հայ հրետանավորները կարողացան տիրապետել նրան և մեծ արդյունավետությամբ օգտագործել շուտով տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում։ Սեպտեմբերի 14-ի գիշերը լեգեոնը առաջ շարժվեց և հարձակման համար երման դիրքեր գրավեց Ռաֆաթ գյուղի մոտ գտնվող Արարա բլրաշղթայի ձախ մասում՝ գեներալ Ալենպիի բանակի կենտրոնի առաջապահում։ Արարայի բարձունքները գտնվում էին հակառակորդի ձեռքում։ Անգլո-ֆրանսիական դաշնակից զորքերը հարձակման համար դիրքեր էին գրավել Միջերկրական ծովի ափերից մինչև Հորդանան գետն ընկած տարածում։ Նրանք ունեին ավելի քան 76 հազար զինվոր և 500 հրանոթ։ Հակառակորդը՝ գերմանա-թուրքական բանակը, որի գլխավոր հրամանատարը գեներալ Լիման ֆոն Սանդերսն էր, ուներ 50 հազար զինվոր և 300 հրանոթ[18]։

Գեներալ Ալենպին մտադրվել էր գլխավոր հարվածը հասցնել Հայֆա նավահանգստից հյուսիս՝ ծովեզրյա Սարոնի դաշտում և հակառակորդին դուրս շպրտել Հուդայի լեռներից։ Խելացի մարտավարության շնորհիվ նա կարողացավ խորամանկել թշնամուն և պատրանք ստեղծել, թե իբր իր զորքերի ձախ թևը սպառնալիքի տակ է, որի համար էլ այդ ուղղությամբ՝ Հորդանանի հովտում է կենտրոնացնում գլխավոր ուժերը։ Իրականում Ալենպին հիմնական ուժերը կենտրոնացրեց ծովեզրյա Սարոնի դաշտում և թշնամու դեմ ստեղծեց զորքերի թվական գերակշռություն. 15 մղոն[19] երկարությամբ ճակատի վրա նա հակառակորդի 8 հազար հետևակի և 130 հրանոթի դիմաց դուրս բերեց 35 հազար հետևակ և 400 հրանոթ։ Հարձակման սկիզբը նշանակված էր 1918 թ. սեպտեմբերի 19-ի առավոտյան ժամը 4³⁰-ին։

Ճիշտ նշանակված ժամանակին սկսվեց անգլո-ֆրանսիական զորքերի վճռական հարձակումը Պաղեստինյան ճակատում։ Նախ գերմանա-թուրքական զորքերի խորամանկները ու ամրությունները ենթարկվեցին ուժեղ հրետանային և մասամբ էլ ավիացիոն ռմբակոծության. որից հետո զորքի ան-

---

16 Ռ. Հակոբյան. Հայ կամավորների լեգեոնի անցյալից.—«Հայ զինվոր», 1—7 ապրիլի 1995, № 12, էջ 8։

17 Տ. Պոյաճյան. նշվ. աշխ., էջ 107։

18 Նույն տեղում, էջ 114։

19 1 մղոնը հավասար է 1,6 կմ։

ցավ հետևակը։ Հայ լեգեոնականները հարձակման անցան Արարա լեռան բարձունքների ուղղությամբ՝ Երուսաղեմ և Նաբլուս քաղաքների միջև ընկած ռազմավարական կարևոր շրջանում։ Նոթ ժամ տևած կատաղի մարտերում, որոնք հաճախակի վեր էին ածվում դաժան սվինամարտի, ի վերջո հաղթանակ տարան հայ քաջորդիները։ Նրանք թուրքերին ցած շպրտեցին Արարայի բարձունքներից, գրավեցին Թշնամու պաշտպանության առաջին գիծը և ամրապնդվեցին այնտեղ։ Հակառակորդը չէր ուզում հաշտվել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող դիրքերի կորստյան հետ, ուստի ուշքի գալով դիմեց հակահարձակման։ Հինգ ժամ շարունակ Արարայի լանջերին բորբոքվեցին արյունահեղ նոր մարտեր, որոնց ընթացքում Թշնամին, հանդիպելով հուժկու հակահարվածի, ետ շպրտվեց։ Սարսափահար փախչող Թշնամու «ուսերի վրայով» լեգեոնականները առաջ են շարժվում և գրավում նաև հակառակորդի պաշտպանության երկրորդ և երրորդ գծերը։ Միաժամանակ աջակցելով լեգեոնին, հարձակման են անցնում հարևան ֆրանսիական՝ ալժիրյան և անգլիական՝ հնդկական զորամասերը։ Կենտրոնում հայերի կողմից ջախջախված և թևերից անգլո-ֆրանսիական զորքերի կողմից շրջապատված գերմանա-թուրքական զորախումբը ստիպված թողնում է ռազմավարական կարևոր դիրքերը և անկանոն նահանջում հյուսիս՝ սկիզբ դնելով պաղեստինա-սիրիական ռազմաճակատի քայքայմանը։ Արարայի ճակատամարտում տարած հաղթանակը նպաստեց գերմանա-թուրքական բանակի վերջնական ջախջախմանն ու նահանջին և այդ գործում իր գգալի ավանդն էր ներդրել Արևելյան լեգեոնը։ Բարձր գնահատելով հայ լեգեոնականների դերը այդ հաղթանակում՝ զորավար Ալենպին 1918 թ. հոկտեմբերի 12-ին Հայ ազգային պատվիրակությանն ուղարկած հեռագրում նշել է. «Հպարտ եմ իմ հրամանատարության տակ հայկական զորամաս ունենալու համար։ Նրանք կռվեցին փայլուն կերպով և մեծ բաժին ունեցան հաղթանակում»[20]։ «Հայկական լեգեոնը ապացուցեց, որ նա ընդունակ է արիաբար կանգնելու ամենամահացու կրակի տակ անդամ», Փարիզ ուղարկած իր հեռագրում նշել է Մերձավոր Արևելքի ֆրանսիական զորքերի շտաբի աշխատակից, կապիտան Կուլոնդրը[21]։

Ռազմավարական մեծ նշանակություն ունեցող բարձունքների գրավումը կարևոր հաղթանակ էր, սակայն այն ձեռք բերվեց հայ քաջորդիների արյան գնով. 21 հայ լեգեոնական զոհվեց Արարայի լանջերին, 3 հոգի մի քանի օր անց մահացան ճակատամարտում ստացած վերքերից, 76 մարտիկ վիրավորվեց կամ խեղումներ ստացավ[22]։ Զոհվածների թվում էին՝ սերժանտներ Արշամ Ամերիկյանը, Գուրգեն Ջիլճյանը, Միսաք Հավունճյանը, Մանուկ Տեր-Հակոբյանը, տասնապետներ՝ Մարտիրոս Բաբայանը, Հովհաննես Գույումջյանը և ուրիշներ։ Մարտն ավարտվելուց հետո զոհված հայորդիներին գինվորական բոլոր մեծարանքներով հողին հանձնեցին Ռաֆաթ գյուղի մոտ։ Հերոսների հիշատակին նվիրված սգո արարողության ժամանակ սրտաբուխ խոսք ասաց լեգեոնի հրամանատար, գնդապետ Ռոմիեոն, որը բարձր գնահատեց ինչպես մարտում քաջարար զոհվածների, այնպես էլ ողջ մնացածների կատարած սխրանքները[23]։

Ինչպես նշեցինք, Արարայի ճակատամարտում տարած հաղթանակը նպաստեց թուրքական ճակատի ճեղքմանը ավելի տեղամասում, որից օգտվելով՝ բրիտանական հեծելազորը հաջորդ օրը՝ սեպտեմբերի 20-ին, 15—20

---

20 Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 117։

21 Նույն տեղում։

22 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, էջ 691։

23 1925 թ. նոյեմբերի սկզբներին Արարայի հերոսների աճյունները Ռաֆաթից տեղափոխվեցին Երուսաղեմ և նույն ամսի 25-ին մեծ շուքով թաղվեցին քաղաքի հայկական ազգային գերեզմանատանը։ Գերեզմանին կանգնեցվեց հուշարձան՝ «Արարայի քաջ հերոսներուն» մակագրությամբ։

մղոն ճակատով, 50 մղոն խորությամբ, մխրճվեց թշնամու դիրքերը և ստիպեց նրան սենկանոն կերպով փախուստի դիմել։ Թուրքական ամբողջ ռազմաճակատը Միջերկրական ծովից մինչև Մեռյալ ծով բացված էր։ Թուրքական «Յըլդըրըմ» անպարտելի համարված բանակը ջախջախված էր։ Շարունակելով առաջխաղացումը՝ դաշնակիցների զորքերը, որոնց հետ նաև Արևելյան լեգեոնը, հոկտեմբերի 1-ին ազատագրում են Դամասկոսը, հոկտեմբերի 6-ին՝ Բեյրութը, իսկ 26-ին՝ Հալեպը։ Լեգեոնականների մարտական ուղին Ռաֆաթ Արարայից ձգվեց հյուսիս՝ ավելի քան 250 կմ։ Նրանք ակտիվ մասնակցություն ունեցան Պաղեստինի, Հորդանանի, Սիրիայի և Լիբանանի տարածքների ազատագրմանը օսմանյան լծից և նպաստեցին այն բանին, որ այդ երկրների ժողովուրդները հետագայում ստեղծեն ինքնուրույն պետություններ։ Բեյրութում լեգեոնին միացավ Կիպրոսից ժամանած նորակազմ 5-րդ գումարտակը, որը այնուհետև մասնակցեց հետագա մարտական գործողություններին։

Ֆրանսիական հրամանատարությունը բարձր գնահատեց հայ լեգեոնականների ծառայությունը՝ նրանցից 25 հոգու պարգևատրելով «Մարտական խաչ» շքանշանով։

Թուրքիայի պարտությունը կատարյալ էր, և նա ստիպված էր 1918 թ. հոկտեմբերի 30-ին Էգեյան ծովի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում խարիսխ նետած անգլիական «Ագամեմնոն» հածանավի վրա Մեծ Բրիտանիայի հետ կնքել զինադադարի պայմանագիր։ Ըստ Մուդրոսի պայմանագրի, Անտանտայի երկրները իրավունք են ստանում գրավել Բոսֆորի և Դարդանելի նեղուցների ամրությունները, իրենց ռազմանավերը կարող էին ապատրաստեն լողարկել այդ նեղուցներով և մուտք գործել Սև ծով։ Թուրքական կայազորները կապիտուլացվում են Հիջազում (այժմ Սաուդյան Արաբիայի մի մասը, որտեղ գտնվում են մուսուլմանական սրբավայրերը), Իրաքում, Սիրիայում և Եմենում, իրենց զորքերը դուրս են բերում Իրանից, Անդրկովկասից և Կիլիկիայից[24]։ Կիլիկիայից թուրքական զորքերը պետք է հետ քաշվեին մինչև 1918 թ. դեկտեմբերի 18-ը, իսկ հայերին իրավունք էր տրվում ներդաշնել իրենց հայրենիք։ Մինչև նշված ժամկետը Կիլիկիայից չհանված թուրքական զինվորներն ու սպաները գերվելու էին, իսկ նրանց զենքն ու զինամթերքը ենթակա էին բռնագրավման։

Ֆրանսիական կառավարության և Հայ ազգային ղեկավարության միջև հաստատված համաձայնությամբ Արևելյան լեգեոնը իրավունք է ստանում մտնել Կիլիկիա, հետևել թուրքական զորամասերի հեռանալուն, ինչպես նաև գրավել երկրամասի կարևոր ռազմավարական շրջանները։ Այդ համաձայնությամբ հայ լեգեոնականներին, փաստորեն, առաջինը ֆրանսիական զորքերից Կիլիկիա մտնելու իրավունք էր տրվում։ Նշենք, որ Ֆրանսիան այդ ժամանակ և հետագա ամիսներին՝ մինչև 1919 թ. հունիսը, Սիրիայի ու Կիլիկիայի սահմանագծում Հայկական լեգեոնի հինգ գումարտակներից բացի համարյա ուրիշ զորամասեր չուներ։

Կիլիկիա մուտք գործելուց առաջ, 1918 թ. նոյեմբերի 15-ին, Բեյրութում ստացվեց ֆրանսիական կառավարության որոշումը՝ Արևելյան լեգեոնի անվանափոխության մասին, այդուհետև լեգեոնը պաշտոնապես ստացավ Հայկական լեգեոն անվանումը։ Նույն օրն էր ստացվեց Ֆրանսիայի ռազմական նախարարության հրամանը՝ Հայկական լեգեոնը Կիլիկիա փոխադրելու մասին։ Նոյեմբերի 21-ին Բեյրութից՝ Ալեքսանդրետի վրայով, նավերով Կիլիկիա է ուղևորվում լեգեոնի առաջին գումարտակը և տեղ հասնելով խորանում երկրի ներքին շրջանները։ Դեկտեմբերի 16-ին Կիլիկիա փոխադրվեցին լեգեոնի 2-րդ և 5-րդ գումարտակները, որոնք շարժվում են դեպի հյուսիս։ Նրանցից առաջինը գրավում է Դյորթ-Յոլ, Բոփրակ-կալե, Իսլահիե գյուղավայրերը, իսկ երկրորդը մտնում է Ադանա։ Լեգեոնի 3-րդ գումարտակը այդ ընթացքում

24 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, Երևան, 1982, էջ 72,

գրավում է Կիլիկիայի Մերսին, Տարսոն և Բոզանթի քաղաքները։ Լեգեոնի զգալի ուժեր տեղավորվեցին նաև Այնթապ, Մարաշ քաղաքներում և այլ բնակավայրերում։ Փաստորեն ողջ Երկրամասն անցնում է Հայկական լեգեոնի վերահսկողության տակ։

1919 թ. փետրվարին Կիլիկիայի գլխավոր կառավարիչ է նշանակվում ֆրանսիացի գնդապետ Էդուարդ Բրեմոն։ Բացի Հայկական լեգեոնից, նա իր տրամադրության տակ չուներ այլ զորամասեր, ուստի շատ դժվար էր դիմակայել թուրքական ճնշմանը, որն այդ շրջանում բավականին ուժեղ էր. 1918 թ. վերջերից մինչև 1919 թ. սկզբները Կիլիկիայում և նրա հարակից շրջաններում դեռևս ոչ քիչ թվով չզինաթափված թուրքական զորամասեր կային, մասնավորապես թուրքական մի ամբողջ բանակ մնացել էր Երկրամասից արևելք՝ Եփրատ և Տիգրիս գետերի միջև ընկած շրջանում։ Բուն Կիլիկիայում Հայկական լեգեոնի դեմ հանդիման կանգնած էր թուրքական 3-հազարանոց ժանդարմական մի գունդ, բացի այդ, թուրքական մի քանի գումարտակներ ամրացել էին Բաղդադի երկաթուղու Կիլիկիայի հատվածի երկայնքով։ Իսկ չենք խոսում մինչև ատամները զինված Կիլիկիայի թուրքերի և հայաշատ վայրերում վերաբնակեցված թուրք մուհաջիրների մասին, որոնց թուրքական նահանջող զորքերը թողել էին ավելի քան 25 հազար հրացան[25]։

Սկզբնական շրջանում թուրքերը երկյուղած էին հայկական զորքերից, սակայն ոգևորվելով ֆրանսիական կառավարիչի անտարբեր վերաբերմունքից, հաճախ նաև նրա և նրա սպասավորների լուռ խրախուսանքից, ավելի ու ավելի թշնամարար էին տրամադրվում հայերի նկատմամբ։ Դա ավելի բացահայտորեն դրսևորվեց հատկապես այն ժամանակ, երբ սկսեցին Կիլիկիա վերադառնալ եղեռնից հրաշքով փրկված և հարևան երկրներում ապաստան գտած շուրջ 150 հազար հայ տարագիրներ[26]։ Հայ-թուրքական ընդհարումները կանխելու, ինչպես նաև Մուդրոսի համաձայնագրով թուրքերի կողմից ընդունված պայմանները կոպտորեն խախտելու փորձերը վերացնելու, երկաթուղու շրջանում գտնվող թուրքական զորքերը զինաթափելու կամ այնտեղից քշելու նպատակով դաշնակից զորքերի ընդհանուր հրամանատար, գեներալ Ալենպիի հրամանով 1919 թ. փետրվարի կեսերին Կիլիկիա է ուղարկվում ցամաքային 19-րդ բրիգադը՝ գեներալ Լեսլիի հրամանատարությամբ։ Փետրվարի 15-ին Լեսլին ժամանում է Ադանա։ Նրա բրիգադում կար հընդիկներից բաղկացած չորս գունդ, որից մեկը հեծյալ, անգլիացիներից կազմված մեկ հետևակ գունդ, գնդացրային մեկ ջոկատ և աշխատանքային մի քանի ստորաբաժանումներ։ Ամբողջ իշխանությունը Կիլիկիայում փաստորեն կենտրոնացվեց անգլիական հրամանատարության ձեռքում։ Այս դրությունը պահպանվեց մինչև 1919 թ. նոյեմբերը[27]։

Կիլիկիա վերադարձած հայերը լուրջ հուսներ էին կապում դաշնակից մեծ տերությունների հետ, հավատում ֆրանսիայի հովանավորության ներքո ինքնավար հայկական պետություն ստեղծելու նրանց տված խոստումներին։ «Մեր ցանկությունն է, որ հայերը տեր դառնան իրենց Երկրին... Մենք պիտի առաջնորդենք զիրենք մինչև որ անոնք աճին, մեծանան ու երբ սկսին ինքնզինքնի կառավարելու գործին մեջ հաջողիլ, այն ատեն մենք բարով պիտի ըսենք ու հեռանանք»[28],— ասել է Էդուարդ Բրեմոն։ Իր խոստումներով Բրեմոյից ետ չէր մնում նաև Մերձավոր Արևելքի ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար, գեներալ Գուրոն. «Կիլիկիան հայուն դարավոր հայրե-

25 Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 112։

26 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 562։

27 Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 119։

28 Ա. Կենջյան. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը և Կիլիկիայի ինքնավարության ակտը, էջ 210։

սիքն է,—նշել է նա,—Կիլիկիան ազատագրվեցավ հայ կամավորներու թափած արյամբ և ուստի Կիլիկիան հայուն պիտի ըլլա»[29]։

Այդ խոստումներից ոգեորված Կիլիկիա վերադարձած հայերը անմիջապես ձեռնամուխ եղան իրենց ավերված բնակավայրերը վերականգնելու, կորցրած կայքն ու գույքը բերելու, մշակութային, հասարակական մեռած կյանքը վերակենդանացնելու գործին։ Սակայն հայերի այդ ոգեորությունը երկար չտևեց, որովհետև շուտով ինչպես Կիլիկիայի, այնպես էլ արաբական երկրների բաժանման հարցում սրվեցին անգլո-ֆրանսիական հարաբերությունները, որի հետևանքով անգլիացիները երկրամասից հանեցին իրենց ենթակայության տակ գտնվող զորքերը և դրանք փոխադրեցին այսպես կոչված Կարմիր գոտի[30]։ Կիլիկիայում թուրքական մեծաթիվ զինված զանգվածների դեմ մնացին ալժիրցի մահմեդականներից կազմված, թվաքանակով քիչ ֆրանսիական ստորաբաժանումներ, որոնք բարյացակամորեն էին տրամադրված իրենց հավատակիցների նկատմամբ, և Հայկական լեգեոնը, որի անձնակազմը հասնում էր շուրջ 3000—5000-ի[31]։ Սակայն լեգեոնի ուժերը ցրված էին Կիլիկիայի տարբեր մասերում, որը հետագայում աղետալի հետևանքներ ունեցավ նրանց համար։ Բացի այդ, շատ անորոշ էր լեգեոնականների կարգավիճակը. նրանք թեև պաշտոնապես չէին մտնում ֆրանսիական բանակի մեջ, սակայն աշխատավարձ և մատակարարում ստանում էին այնտեղից։ Նրանք մշտապես գտնվում էին սպասողական վիճակում, քանի որ կարծում էին, թե Ֆրանսիան Կիլիկիային ինքնավարություն կշնորհի, իսկ լեգեոնն էլ պետք է վերակազմավորվի Կիլիկիայի հայկական պետության բանակի։ Այս անորոշ վիճակն ավելի բարդացավ, երբ 1919 թ. մայիսին գնդապետ Ռոմիեոյի փոխարեն Հայկական լեգեոնի հրամանատար նշանակվեց գեր-գնդապետ Ֆլի-Սեյնթ Մարին, իսկ նույն տարվա դեկտեմբերի 2-ին Բեյրութից Ադանա փոխադրվեց Մերձավոր Արևելքում ֆրանսիական առաջին զորաբաժնի հրամանատար գեներալ Ժուլիեն Տյուֆոն։ Վերջինս Կիլիկիայում ստեղծեց ոչ թե հայկական ինքնավարություն, այլ զինվորական իշխանություն՝ իր տրամադրության տակ չունենալով համապատասխան քանակության ուժեր։ Զինվորականների այդ վերաբերմունքը հայերի նկատմամբ պատահական չէր և բխում էր ֆրանսիական կառավարման շրջաններից, որոնց նպատակը ոչ թե հայերին ինքնավարություն տալն էր, այլ Կիլիկիան իրենց գաղութ դարձնելը։ Հենց այդ են հաստատում Ֆրանսիայի վարչապետ Բրիանի խոսքերը, որոնք ասվել են 1920 թ. մարտի 27-ին կառավարության նիստի ժամանակ. «Կիլիկիան շատ հարուստ երկիր մըն է։ Վաղը եթե մենք չըլլանք, ո՞վ պիտի ըլլայ մեր տեղը։ Եթե տեսնենք, որ մեր տեղը ուրիշն եկած է, այն ատեն պիտի հասկանանք մեր սխալը և պիտի զղջանք... Կիլիկիա կը նշանակե բամբակ, որ կը պակսի մեզի, ինչպես նաև շատ մը հարստություններ»[32]։ Ֆրանսիայի վարչապետը «ուրիշն» ասելով հասկանում էր առաջին հերթին հայերին, որոնք միամտորեն հավատացել էին, թե «ազատարար» Ֆրանսիան Կիլիկիան վերադարձնելու է իրենց։ Ուստի պատահական չէր, որ երբ 1920 թ. օգոստոսի 3-ին Ադանայից արևելք գտնվող Սիհան և Ճիհան գետերի միջև ընկած տարածքում հայ ազգային կուսակցություններն առանձին-առանձին հռչակվեցին «Միջագետքի հանրապետություն», ապա գնդապետ Բրեմոն

---

29 Նույն տեղում, էջ 280։

30 1916 թ. մայիսի 16-ին Անգլիայի և Ֆրանսիայի միջև կնքված այսպես կոչված Սայքս-Պիկոյի համաձայնագրով անգլիացիներին էր անցնում Կարմիր գոտին, որն ընդգրկում էր Իրաքի հարավային մասը (Բաղդադ և Բասրա քաղաքներով), ինչպես նաև պաղեստինյան Հայֆա և Աքքա նավահանգիստները։

31 Ս. Պոյաճյան. նշվ. աշխ., էջ 133, Ռ. Գ. Սահակյան. նշվ. աշխ., էջ 116։

32 Կ. Իգմիրլյան. նշվ. աշխ., էջ 210։

հենց նույն օրը վերացրեց այդ հանրապետությունները։ Նույն ճակատագրին արժանացավ նաև օգոստոսի 4-ին Ադանայում Հայ ազգային պատվիրակության Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ Սիրան Ծամամյանի նախագահած Ազգային գերագույն խորհրդի կողմից Ֆրանսիայի հովանավորության ներքո հռչակված ինքնավար Հայաստանի Հանրապետությունը։ Վերջինս գոյություն ունեցավ ընդամենը երկու օր և ֆրանսիացիների կողմից ցրվեց օգոստոսի 6-ին։ Ֆրանսիացիների այդ հակահայկական գործողությունները արժանացան տեղական թուրքերի, ինչպես նաև Անկարայի քեմալական Թուրքիայի կառավարության գովեստներին։ Դրանից հետո ֆրանսիական իշխանությունները սկսեցին աստիճանաբար կրճատել Հայկական լեգեոնի թվական կազմը՝ 5000-ից այն հասցնելով 1500-ի։ Դա քեմալականների հռչակած ազգային պատերազմի օրերին ոչ միայն սխալ էր, այլև՝ դավաճանություն հայերի նկատմամբ։

Այդ շրջանում Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու համար քեմալականները իրենց պայքարն սկսեցին Կիլիկիայի ճակատից, որտեղ անգլիական զորքեր չկային, իսկ ֆրանսիացիները չափազանց թույլ էին և վատ չէին տրամադրված թուրքերի նկատմամբ։ Քեմալականները, շարունակելով երիտթուրքերի հակահայկական քաղաքականությունը, ծրագրել էին վճռական պայքար մղել բոլոր այն շարժումների դեմ, որոնց նպատակը անկախ Հայաստանի ստեղծումն էր[33]։

1919—1921 թթ. քեմալականները Կիլիկիայում գործողություններ ծավալեցին։ Նրանք իթթիհատականների (երիտթուրքերի) հետ միասին մահմեդական ազգաբնակչությանը բորբոքում էին հայերի դեմ, նրանց գաղտնի կերպով զինում և ապահովում էին ռազմամթերքով։ «Օրը ցերեկով,—գրել է դեպքերի ականատես ֆրանցիսկյան հայրերի Մարաշի վանքի վանահայր Մատերն Մյուրեն,—քեմալական ղեկավարները տեղական իշխանությունների հետ գործակցած զենք ու ռազմամթերք էին բաժանում քաղաքի ու շրջակայքի բնակիչներին, գնդացիրներ առաքում քաղաք, տների պատերի մեջ հրակնատներ պատրաստում և, վերջապես, բարիկադներ կառուցում»[34]։ Ֆրանսիական հրամանատարությունը ոչինչ չձեռնարկեց քեմալականների գործողությունների դեմ և չօգնեց հայերին դիմակայելու թուրքերին։ Դեռ ավելին, 1920 թ. օգոստոսի 19-ին, Սևրի պայմանագրի կնքումից 9 օր անց, Մերձավոր Արևելքի ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Գուրոն, առաջին զորաբանակի հրամանատար գեներալ Տյուֆոն և Հայկական լեգեոնի հրամանատար գնդապետ Ֆլի-Սեյնթ Մարին հրաման ստորագրեցին Հայկական լեգեոնը կազմաքրելու մասին[35]։

Լեգեոնի ցրումից հետո լեգեոնականների մի զգալի մասը ֆրանսիացիների կողմից զինաթափ արվեց և հեռացվեց Կիլիկիայից, իսկ մի մասը չենթարկվելով ֆրանսիացիներին, մնաց և մասնակցեց Կիլիկիայի տարբեր քաղաքներում թուրքերի դեմ հայերի մղած հերոսամարտերին։

Ավարտելով 1916—1920 թթ. ֆրանսիական բանակի կազմում գոյություն ունեցած Հայկական լեգեոնի մասին մեր սույն համառոտ ակնարկը, դալիս ենք այն եզրակացության, որ Հայ ազգային պատվիրակության և Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների համաձայնությամբ վերոհիշյալ ժամանակամիջոցում ստեղծված, հիմնականում Մեծ եղեռնից փրկված հայ կամավորներից կազմավորված շուրջ 5000 անձնակազմ ունեցող Հայկական այդ զորամասը կարևոր դեր է կատարել Մերձավոր Արևելքում դաշնակից երկրների զորքերի՝ թուրքերի դեմ տարած հաղթանակում։

---

33 Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան. Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենդափոխումը թուրք պատմագրության մեջ. Երևան, 1963, էջ 44։

34 Ռ. Գ. Սահակյան. Նշվ. աշխ., էջ 138—139։

35 Տ. Պոյաճյան. Նշվ. աշխ., էջ 372—375։

АРМЯНСКИЙ ЛЕГИОН ФРАНЦУЗСКОЙ АРМИИ В 1916—1920 ГОДЫ

Доктор истор. наук КЛИМЕНТ АРУТЮНЯН

Резюме

Согласно акту, принятому 27 октября 1916 г. в Лондоне между председателем Армянской национальной делегации Погос Нубар пашой и полномочными представителями правительств Франции и Англии Жоржем Пико и Майклом Саксом в конце ноября в составе французской армии на острове Кипр сформировался Восточный легион, состоявший преимущественно из западных армян. С 15 ноября 1918 г. легион официально получил название Армянского. Личный состав легиона достигал 3000—5000 человек. Он принимал активное участие в боевых действиях против Османской Турции на Палестино-сирийском фронте и особенно отличился в битве 19 сентября 1918 года за высоты горы Арар, победа в которой сыграла решающую роль при прорыве обороны противника и увенчалась его полным уничтожением.

После Арарского сражения легион в авангарде англо-французских войск с боями прошел более 250 км. и 6 октября вошел в Бейрут. Впоследствии Армянский легион был переброшен в Киликию, где активно участвовал в освобождении края от турецких войск. Однако 19 августа 1920 г. легион был предательски расформирован французами

THE ARMENIAN LEGION OF THE FRENCH ARMY in 1916—1920s

Doctor of Hist Sc. KLIMENT HARUTYUNYAN

Summary

According to the Act (October 27, 1916) signed in London by the head of the Armenian national delegation Poghos Nubar Pasha and plenipotentiary representatives of the governments of France and Britain at the end of November on Cyprus was formed the Eastern Legion of the French Army consisting mainly of the Western Armenians. Since 15 November 1918 the Legion adopted officially the name—«Armenian». It numbered 3000—5000 people. The Armenian Legion took active part in military actions against the Ottoman Empire on the Palestine-Syrian front and especially distinguished itself in the battle for the Arara mountain's hights (September 19, 1918) when the enemy was completely annihilated. After the Arara battle the Armenian Legion in the vanguard of the British-French forces marched 250 km with battles and on October 6 entered Beirut. Later the Armenian Legion was transferred to Cilicia where it took active part in liberation of the country—fighting against Turkish troops. But, on August 19, 1920 the Legion had been treacherously disbanded by the French authorities.